

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Տոնելով Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 50-ամյակը, սովետական ժողովուրդը նշում է առանձնապես գիտության նվաճումները, նրա շտեմնաված ծաղկումը մեր երկրում: Ե՛իշտ է, գիտությունը զարգացում է ապրել նաև անցյալ դարաշրջանում, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, սակայն այն նախկինում եղել է անհատ գիտնականների, առանձին հիմնարկների գործ և երբեք չի հանդիսացել պետության ու ժողովրդի հատուկ խնամքի առարկան: Սովետական իշխանությունը իր գոյության ուսույչին օրվանից կենդանի անմիջական ցուցումներով հատուկ հոգստարության առարկա դարձրեց գիտությունը: Սովետական իշխանության հենց առաջին տարիներին, բազմաթիվ պատերազմի հետևանքով քայքայված տնտեսության պայմաններում, Միության մեջ հիմնադրվեցին այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են՝ կենդանաբանության հիդրոլոգիայի ինստիտուտը, աստղագիտական ինստիտուտը, աստրոֆիզիկայի ինստիտուտը Մոսկվայում և այլն: Նույնանման պայմաններում Հայաստանում սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո կազմակերպվեց Երևանի պետական համալսարանը, որը մեր հանրապետությունում սկիզբ դրեց գիտական աշխատանքին: Իսկ 1943 թ. նոյեմբերին, երբ մեր երկրի մի մասում դեռ մոլեգնում էր արյունահեղ պատերազմը, հիմնադրվեց մեր հանրապետության գիտությունների ակադեմիան: Միության բոլոր հանրապետություններում հաջորդաբար ստեղծվեցին ու ընդարձակվեցին գիտական խոշոր կենտրոններ: Նովոսիբիրսկում կազմակերպվեց միութենական գիտությունների ակադեմիայի Սիրիի բաժանմունքը, որը հանդիսանում է գիտական մի նոր հսկայական կենտրոն:

Շատ բան տրվեց գիտությունը, և գիտության աշխատողները պարտքի տակ շնորհակալ են հայրենի երկրի հանդեպ: Դեռ մինչև Հայրենական պատերազմը սովետական գիտությունն ու տեխնիկան որոշ բնագավառներում գրավեցին ամենաառաջատար տեղը աշխարհում: Որպես օրինակ կարելի է բերել մաթեմատիկան, անոթագիտությունը, հրթիռային տեխնիկան: Ե՛րբ նախասովետական Ռուսաստանի ֆիզիկան շատ էր հետ մնում արտասահմանյան ֆիզիկայից, ապա այդ հետամնացությունը հիմնականում հաղթահարվեց և պայմաններ նախապատրաստվեցին մի նոր վերելքի համար, որը տեղի ունեցավ արդեն պատերազմից հետո: Չնայած պատերազմի հասցրած հսկայական վնասներին, գիտության զարգացումը մեր երկրում պատերազմից հետո ստացավ ավելի մեծ թափ, հասավ ժամանակակից ամենաբարձր մակարդակին:

Զեկուցում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին նվիրված ՀՍՍՀ ԳԱ ռեդհանուս ժողովում:

1957 թ. հոկտեմբերի 4-ին սովետական գիտնականներին հաջողվեց առաջին անգամ ուղեծիր դուրս բերել արհեստական արբանյակ և դրանով սկիզբ գնել տիեզերքի նվաճման դարաշրջանին: Երկրին հայտնի են մեր ձեռք բերած փայլուն հաջողությունները տիեզերքի նվաճման բնագավառում: Դրանք են. լուսնի հակառակ կողմի լուսանկարները, Յուրի Գագարինի անօրինակ թռիչքը, հրթիռի միջոցով սովետական երկրի խորհրդանիշի սեղադրումը լուսնի վրա, գիտական կայանի առաջին փափուկ վայրէջքը լուսնի վրա և նրա լանդշաֆտի պատկերների հաղորդումն այնտեղից, լուսնի առաջին արհեստական արբանյակը և, վերջապես, գիտական կայանի փափուկ վայրէջքը Վեներայի խորհրդավոր մակերևույթի վրա:

Երկրագնդի տեխնիկայի առաջավոր երկրները՝ Միացյալ Նահանգներն ու Ֆրանսիան, տիեզերքի ուսումնասիրության և նվաճման հարցում հետևում են մեզ: Միացյալ Նահանգների գիտնականները գիտության պատմությունը այժմ բաժանում են մինչսպուտնիկային և ետսպուտնիկային դարաշրջանների: Մեր երկրի նվաճումները գիտության մեջ հսկայական ազդեցություն են գործում ամբողջ աշխարհի վրա և խաղում առաջատար դեր:

Նրբ մենք հետևում ենք զարգացման այն ընթացքին, որ ապրել է գիտությունը մեր հանրապետությունում, ապա տեսնում ենք, որ այդ զարգացումը Սովետական Հայաստանում ունեցել է իր առանձնահատկությունները, իր դժվարությունները: Հայտնի է, որ Հայաստանը մինչև 1920 թ. այդ ասպարեզում ետ էր մնացել ոչ միայն զարգացած երկրներից, ոչ միայն կենտրոնական Ռուսաստանից, որը այս դարի սկզբներում, այնուամենայնիվ, ունեցել է մի քանի հիանալի համալսարաններ, որտեղ աշխատել են համաշխարհային հռչակ ունեցող այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Մենդելևեր, Լեբեդևեր, Պավլովը, այլև հարևան երկրներից: Հայաստանի ետ մնալը գիտության բնագավառում սերտորեն կապված է եղել նրա արդյունաբերության ցածր մակարդակի, ժամանակակից տեխնիկայի գրեթե լրիվ բացակայության հետ: Դրան պետք է ավելացնել նաև այն համատարած ավերումը, որին ենթարկվեց մեր երկիրը զաշնակցականների բարերախտաբար կարծատես տիրապետության ժամանակ, և պարզ կդառնա այն մակարդակը, որից մեր հանրապետությունը պետք է սկսեր իր գիտական վերսլքը:

Սիրով ու հարգանքով պետք է հիշենք այստեղ հայ մտավորականության այն ազնիվ և անխոնջ մշակներին, որոնք գիտակցելով, որ ժողովրդի ընտրած ճանապարհը միակն է, որ տանում է զեպի ծաղկումը և առաջագիմությունը, սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո հավարվեցին Հայաստանում և զյեցին այստեղ գիտության հիմքերը: Մենք միշտ կհիշենք լեզվաբան Աճառյանի, հայագետներ Մ. Արեղյանի, Ստ. Մալխասյանի, պատմաբան Մանանդյանի, քիմիկոս Ղամբարյանի և բազմաթիվ այլ գիտնականների անունները, որոնք կատարելով շնորհակալ և մեծ գիտական աշխատանք, միևնույն ժամանակ ոգևորությամբ զբաղվեցին երիտասարդ գիտական աշխատողների պատրաստման գործով: 20-ական և 30-ական թթ. Հայաստանը գիտության այն բնագավառում, որը կոչվում է հայագիտություն, դարձավ գիտական կարևորագույն կենտրոն: Միևնույն ժամանակ այդ սարիներին կազմեր պատրաստվեցին բազմաթիվ այլ գիտությունների՝ մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության և հասարակական գիտությունների բնագավառների համար: Եիշտ է, այդ կազմերի մի մասը մենք կորցրեցինք պատերազմի ժամա-

նակ, սակայն պատերազմը չկարողացավ կասեցնել գիտության հետագա ծավալումը Հայաստանում: Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ կադրերի պատրաստման գործում, մասնավորապես 20—30-ական թթ., հսկայական դեր խաղացան հանգամանքը, որ մենք սերտորեն կապված էինք մեր եղբայրական հանրապետությունների և առաջին հերթին Ռուսաստանի, ուստի մեծ ժողովրդի հետ: Խոշորագույն ուսուցիչականները, տեղագիտիկոսները, թղթակից-անդամները, պրոֆեսորները մեծ սիրով և նվիրվածությամբ մասնակցեցին Հայաստանի գիտական կադրերի պատրաստման գործին: Մենք բոլորս, համենայն դեպս մեզանից շատերը, նրանք, ովքեր սովորել են 20—30-ական թթ. և ավելի ուշ, մեծապես երախտապարտ են ուսուցիչականներին, որոնք շինակցեցին իրենց ժամանակը, գիտելիքները և ուժերը մեզ պատրաստելու համար:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմակերպումը (1943 թ. նոյեմբերին) առանձնապես ազդեց ճշգրիտ գիտությունների զարգացման վրա: Ֆունդամենտալ և կիրառական գիտությունների բնագավառում ստեղծվեցին բազմաթիվ գիտական ինստիտուտներ: Հիմնվեցին նոր գիտական ուղղություններ և դպրոցներ: Մեր գիտնականները միշտ ձգտում էին իրենց աշխատանքը համապատասխանեցնել Հայաստանի արդյունաբերության և դուրսատնտեսության և առհասարակ ժողովրդական տնտեսության զարգացման խնդիրներին: Առանձին ուղղություն նվիրվեց ֆիզիկա-մաթեմատիկական գիտություններին: Մենք ունեցանք որոշակի հաջողություններ մաթեմատիկական հետազոտությունների բնագավառում: Հայաստանի մաթեմատիկոսները իրենց ավանդը մտցրին ֆունկցիաների տեսության, դիֆերենցիալ հավասարումների, մաթեմատիկական ֆիզիկայի բնագավառներում: Աշխատանքներ են սկսվել նաև այնպիսի կարևոր բնագավառներում, ինչպիսիք են հավանականության տեսությունը, մաթեմատիկական տրամաբանությունը: Մի փոքր ավելի ուշ մեծ մոտ աշխատանքներ սկսվեցին կիրառական մաթեմատիկայի և մասնավորապես մեքենայական մաթեմատիկայի բնագավառում կադրեր ստեղծելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում չգուցի աշխատանք է կատարված ծրագրման տեսության և մեքենայական թարգմանության բնագավառներում, որոնք մեզ մոտ բավական մեծ կշիռ ունեն և այժմ էլ զարգանան, քանի որ մեքենայական թարգմանությունը, շնայած արտահայտված որոշ տարակուսանքներին, ունի խոշոր արդարացի:

Մեծ է մեր գիտնականների դերը մաթեմատիկական, էլեկտրոնային մեքենաների ստեղծման գործում: Մենք ունենք մի հիանալի հիմնարկություն, որտեղ ստեղծվում են նոր տիպի մաթեմատիկական և էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ: Մեր հանրապետությունը խոշոր հեռանկարներ ունի այդ գործը զարգացնելու համար, հաշվի առնելով արտադրության և ժողովրդական տնտեսության պահանջները:

Անցյալում, մինչև Հոկտեմբերը, մենք փաստորեն մեխանիկա չենք ունեցել, մինչդեռ այժմ ունենք մեխանիկայի այնպիսի բավական զարգացած բնագավառ, ինչպիսին է սողքի և թաղանթների տեսությունը: Հետաքրքիր ուսումնասիրություններ են սկսվում մեզանում ապակեպլաստ նյութերի հատկությունների տեսական ուսումնասիրության և այդ հիման վրա նոր նյութերի ստեղծման ուղղությամբ: Ինձ թվում է, որ մեր մեխանիկաների կողմից կատարված աշ-

խատանքները ևս մեծ արժեք են ներկայացնում մեր ժողովրդական տնտեսության հեռանկարների տեսակետից:

Հաջորդ ուղղությունը աստղագիտությունն է: Այստեղ մեծ դեր խաղաց պատերազմից հետո ակադեմիայի ցանցում Բյուրականի աստղագիտարանի կազմակերպումը: Բյուրականի աստղագիտարանում առաջին անգամ կատարվել է աստղասփյուռների հայտնաբերումը, այսպես կոչված խեցզետնաձև միգամածության բևեռացման հայտնագործումը: Մեկ մոտ հայտնաբերվել է գալակտիկաների մի նոր դաս, այսպես կոչված կապույտ գալակտիկաները: Վերջերս Շմիդտի մետրանոց ներ-ռեֆլեկտորի միջոցով կատարվել է հազվագյուտ գալակտիկաների դասի մի նոր տեսակի ուսումնասիրությունը, որը նոր լույս է սփռում գալակտիկաների կորիզների պրոբլեմի վրա և որով այժմ զբաղվում են ամբողջ աշխարհում: Եւս գալակտիկաների կորիզների այսպես կոչված անկայունության և նրանց ակտիվության խնդիրն է, որի ուսումնասիրությունը փաստորեն մեծ աշխուժություն է մտցրել արտազգայակտիկ աստղագիտության մեջ: Այդ նոր տիպի գալակտիկաների՝ կապույտ գալակտիկաների ուսումնասիրությունը կարելի է համեմատել կվադարների հայտնաբերման հետ: Ուսումնասիրությունները կատարվում են և՛ օպտիկական, և՛ ռադիո-աստղագիտական մեթոդներով: Պետք է ասել, որ վերջին տարիների ընթացքում մեր աստղագիտարանը բավականին հեղինակություն է ձևառ բերել: Մեր աստղագետներին հնարավորություն է տրվում օգտագործել ոչ միայն մեր հեռագիտակները, այլև աշխարհի համարյա բոլոր աստղագիտարանների գործիքները: Մեր աշխատակիցները մեծ հեռագիտակներով դիտումներ են կատարել նաև հարավային կիսագնդում և այլ երկրներում, իսկ գա շափազանց կարևոր է:

Մեծ վարզացում պարեց մեր հանրապետությունում ֆիզիկան, որը սերտորեն կապված է աստրոֆիզիկայի հետ և շատ հարցերում սնվում է աստրոֆիզիկայից: Հետաքրքիր արդյունքներ ստացվեցին կոսմոսիկական ճառագայթների և մասնավորապես տարրական մասնիկների փոխազդեցությունների և նրանց զենքերացիայի ուսումնասիրությունների բնագավառում: Այդ երևույթներն ավելի մանրամասն, ավելի հանգամանորեն ուսումնասիրելու համար Հայաստանում կառուցվեց օդակաձև արագացուցիչը: Դա բավականին բարդ և իր կառուցման շրջանում աշխատանքի մեծ լարում պահանջող գործիք է: Այժմ նա արդեն հասել է նախագծված հզորությանը: Էլեկտրոնային և իոնային շարժիչի վրա կտան հետաքրքիր արդյունքներ: Պետք է ասել, որ այդ աշխատանքները մեր ֆիզիկոսներին բերեցին ճառագայթման տեսության ուսումնասիրությանը: Այստեղ կատարվեցին շատ լուրջ տեսական հետազոտություններ, որոնց հետևեցին նաև էքսպերիմենտալ աշխատություններ և ուսումնասիրություններ՝ ռադիացիոն ֆիզիկայի և մասնավորապես քվանտային օպտիկայի բնագավառում:

Մեծ հաջողություն պետք է համարել այն հանգամանքը, որ մեկ մոտ տեղի են ունենում բավական հետաքրքիր գիտաժողովներ՝ նվիրված տարրական մասնիկներին, որոնց մասնակցում են ոչ միայն մեր հայրենական գիտնականները, այլև աշխարհի այլ երկրների գիտնականները: Մեկ մոտ բավական հաճախ են հրավիրվում այսպես կոչված զպրոցներ: Բոլորովին վերջերս ավարտվեց քվանտային օպտիկայի հարցերին նվիրված շափազանց հետաքրքիր խորհրդակցություն, որին շատ ակտիվորեն մասնակցեցին նաև Հայաստանի ֆիզիկոսները: Կարևոր աշխատանք է կատարում նաև ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինս-

տիտուտը, որտեղ ստեղծվում են նոր սարքեր: Այդ սարքերը շափաղանց մեծ նշանակություն ունեն ժամանակակից տեխնիկայի մեջ հանդիպող խնդիրների լուծման համար: Մշակվում է համապատասխան մեթոդիկա, և որոշ տիպի ընդունիչ սարքերի ստեղծման գործում ինստիտուտը առաջատար դեր է կատարում մեր երկրում:

Շնորհիվ ակադեմիկոս Ղամբարյանի, մենք այժմ մեր հանրապետությունում քիմիայի գծով ունենք բազմաթիվ բարձրակարգ կայրեր ոչ միայն գիտության, այլև արտադրության մեջ: Քիմիայի զարգացումը մեզ մոտ գնում է սարքեր ուղղություններով, առաջավոր գեր կատարելով քիմիական արդյունաբերության զարգացման մեջ:

Պետք է առանձին նշել այն մեծ կարևորությունը, որ ունի անօրգանական քիմիայի ինստիտուտի աշխատանքը, որովհետև մեր հանրապետությունը հանրահայտ է իր քիմիական հումքի հարուստ պաշարներով:

Մենք հետաքրքիր աշխատանքներ ունենք նաև օրգանական քիմիայի և քիմիական ռեակցիաների տեսական ուսումնասիրության բնագավառներում ացետիլենի քիմիայի գծով, պոլիմերների քիմիայի գծով: Այդ բոլոր բնագավառները ապահովված են որակյալ կադրերով: Բոլորին հայտնի են այն աշխատանքները, որոնք կատարվում են նորը օրգանական քիմիայի բնագավառում: Դրանք վերաբերում են օրգանիզմի վրա այս կամ այն քիմիական միացության ազդեցության և նոր դեղանյութերի ստեղծման պրոբլեմներին, մասնավորապես հետերոցիկլիկ միացությունների ուսումնասիրությանը:

Վերջերս մեզ մոտ սկսել է զարգանալ քիմիական ֆիզիկան, որը թույլ է տալիս ավելի մեծ նրբություններ ուսումնասիրել: քիմիական պրոցեսները, նրանց ինտենսիվությունը և կանոնավորման նոր ճանապարհները: Այստեղ մենք ունենք առաջին հաջողությունները:

Հայաստանում մեծ դեր ունի երկրաբանությունը: Մեզ մոտ հաճախ ընդգծում են, որ մեր հանրապետությունը իր մակերեսով փոքր է, բայց պետք է ընդգծենք նաև այն, որ այդ փոքր մակերեսը շափաղանց հարուստ է: Երկրագնդի վրա երևի զովար է նշել մի ուրիշ նման հողակտոր, որը պարունակի թե՛ մետաղական և թե՛ ոչ մետաղային այդքան մեծ և տարբեր հարստություններ: Մեր երկրաբանները շնորհակալ մեծ գործ են կատարել Հայաստանի երկրաբանական կառուցվածքի, Հայաստանի մետաղագենիայի ուսումնասիրության բնագավառում: Նրանք տվել են շատ լավ աշխատանքներ, որոնք կարող են օրինակ ծառայել ուրիշ հանրապետությունների համար: Նրանք մեծ ավանդ ունեն նոր հանքավայրեր գտնելու մեջ: Եթե առաջ Հայաստանը ուներ միայն պղնձի հանքեր, ապա այժմ մենք արտադրում ենք մոլիբդեն, ոսկի, ռենիում, բազմաթիվ այլ հալվազյուտ մետաղներ: Չպետք է մոռանանք, սակայն, որ Հայաստանը իրենից ներկայացնում է հրիսասարյ հրաբուխների մի երկիր, ուստի հրաբուխների ուսումնասիրությունը միզանում շատ կարևոր պրոբլեմ է: Այդ բնագավառում որոշ բան արված է: Անհրաժեշտ է, որ ավելին արվի: Կարևոր է գեոֆիզիկական մեթոդների կիրառումը: Խոշոր աշխատանք է տարվել լենինականում այդ բնագավառում գիտական կենտրոն ստեղծելու ուղղությամբ, որի մեջ մեծ վաստակ ունի ակադեմիկոս Ա. Գ. Նալարովը:

Մենք լուրջ հաջողություններ ունենք նաև էներգետիկայի բնագավառում: Մեր էներգետիկները շատ արդյունավետ աշխատանքներ են տանում էներգետիկ սիստեմների կառավարման և կանոնավորման ավտոմատացման բնա-

զավառում: նրանք ստեղծել են նոր տիպի մեքենաների սիստեմներ, որոնք մեծ ճանաչում են գտել պրակտիկայում:

Էլեկտրատեխնիկական գիտության մարզում, նոր էլեկտրական մեքենաների ստեղծման գործում մեծ ներդրում ունի համամիութենական էլեկտրասարքավորումների ինստիտուտը: Մի փոքր ավելի սաղմնային վիճակում է գտնվում կիսահաղորդիչների ֆիզիկայի կիրառությունը, սակայն այդ գործը ևս զարգանում է:

Ահա բազմաթիվ գործնական բնագավառներ, որտեղ ֆունդամենտալ գիտությունները, ճշգրիտ գիտությունները կարող են գտնել իրենց անմիջական կիրառությունը:

Այժմ մենք մեծ նշանակություն ենք տալիս կենսաբանական գիտություններին ոչ միայն Հայաստանի կենդանի աշխարհի հարստությունների մանրամասն ուսումնասիրման, այլև նոր կիրառական և տեսական խնդիրների լուծման համար: Այդ կիրառական խնդիրներից ևս կուզեի նշել կանաչապատման պրոբլեմների բնագավառում մեր գիտնականների կատարած խոշոր աշխատանքի մասին: Տեսական բնագավառներից կարելի է նշել բույսերի ֆիզիոլոգիայի և մասնավորապես բույսերի օնտոգենեզի զարգացման բնագավառում կատարված ուսումնասիրությունները: Աշխատանքներ են սկսվել բիոնիկայի բնագավառում:

Այսօրվա կենսաբանության համար մեծ նշանակություն ունի բիոբիմիան: Պետք է ասել, որ մեր բիոբիմիայի ինստիտուտը, որը զբաղվում է գլխուղեղի բիոբիմիայի հարցերով, ունի խոշոր հաջողություններ, մասնավորապես, մի շարք նոր նյութերի հայտնաբերման ուղղությամբ, որոնք արտադրվում են զրվխուղեղում և կարող են հետաքրքիր լինել կիրառության տեսակետից, եթե նրանք սինթեզվեն: Նոր բիոլոգիայի մեջ խոշոր դեր է խաղում նաև միկրոբիոլոգիան: Մեր միկրոբիոլոգների առջև զբվեց այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է լիզինի արտադրության տեխնոլոգիայի մշակումը: Եվ մեր միկրոբիոլոգները զրտնրվեցին իրենց բարձրության վրա. նրանք ցույց տվին, որ իրենք կարող են հաղթահարել զժվարությունները, և նրանց ջանքերի շնորհիվ գործարանն արդեն կառուցվում է: Միկրոբիոլոգիայի ինստիտուտը մեծ նախաձեռնություն և հմտություն է ցույց տալիս միկրոբիոլոգիական արդյունաբերության ստեղծման մեջ առհասարակ: Միկրոբիոլոգիական արդյունաբերությունը մեր երկրում այսօր դեռ զբաղվում է համեմատաբար փոքր տեղ, բայց սպառված նրան է պատկանում: Ուստի մենք պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնենք տվյալ բնագավառին: Ուրախալի է, որ մեր միկրոբիոլոգների մեջ կան մարդիկ, որոնք օգնում են մեր կառավարությանը, մեր արտադրությանը՝ ստեղծելու միկրոբիոլոգիական արդյունաբերության նոր ճյուղեր:

Ավելի հին է մեզ մոտ հիդրոբիոլոգիան, որը հաջողությամբ լուծեց և, հուսով ենք, հետո էլ կշարունակի լուծել Սևանի ավազանում ձկների պաշարների պահպանման խնդիրը, որը բավական ղժվար գործ է և պահանջում է գիտական շատ նուրբ մոտեցում:

Համեմատաբար նոր է մեզ մոտ աշխատանքը գենետիկայի բնագավառում, մի բնագավառ, որը տարիներ առաջ բավական տուժեց գենետիկայի նկատմամբ Լիսենկոյի ցուցաբերած նիհիլիստական վերաբերմունքի պատճառով: Պետք է գոհունակությամբ նշել, որ մեր գենետիկները այժմ լուրջ գիտական հիմքերի վրա են գնում այդ աշխատանքը, և մենք նրանցից սպասում ենք նոր հաջո-

դուրսը: Մեր սելեկցիոներները հիանալի աշխատանք են կատարում մի շարք բույսերի տեսակների ընտրության և դրանք արտադրության մեջ ներդրելու գործում: Զգալի հաջողությունների են հասել ագրոբիմիկոսները: Նրանք մեծ նախաձեռնություն հանգնեցին բերեցին մեր երկրում հիդրոպոնիկայի հարցների ուսումնասիրության ասպարեզում: Այդ մեթոդը և առհասարակ բույսերի աճեցման արդյունաբերական մեթոդները չափազանց կարևոր են: Դրանք առաջին հերթին կարևոր են այնպիսի մի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, որն ունի համեմատաբար փոքր տարածություն, և մենք ոչինչ չպետք է խնայենք այդ ուղղությունը պարզացնելու համար: Այստեղ ևս կան լուրջ հաջողություններ:

Իր գոյության առաջին օրվանից մեր գիտությունների ակադեմիան մեծ նշանակություն է տալիս հասարակական գիտությունների պարզացմանը: Հասարակական գիտությունները մեր երկրում, ամբողջ Սովետական Միության մեջ, խարսխվում են մարքսիզմ-լենինիզմի ամուր հիմքերի վրա, որը թույլ է տալիս բոլոր խնդիրներին մոտենալու գիտական տեսակետից և լուծելու դրանք բարձր մակարդակով:

Հայաստանում հասարակական գիտությունների պարզացումը առաջին հերթին աչքի է ընկնում հայագիտության բնագավառում: Հայոց պատմությունը երբեք չի եղել այնպիսի սիստեմատիկ ուսումնասիրությունների առարկա, ինչպես այժմ: Ստեղծվել են բազմաթիվ մենագրություններ, որոնք հայտնի են մեր հասարակությանը: Պետք է գոհունակությամբ նշել, որ մենք այսօր ստացանք «Հայոց պատմության» բազմահատորյակի 7-րդ հատորը, որն ընդգրկում է սովետական շրջանի առաջին փուլը: Մենք հուսով ենք, որ հետագա և նախորդ հատորները նույնպես ժամանակին լույս կտեսնեն:

Պատմության կողքին մեզ մոտ ծաղկում է հնագիտությունը: Այս ուղղությամբ կատարված գիտական աշխատանքներն ու պեղումները Հայաստանը հայտնի են դարձրել Միության մեջ և ամբողջ աշխարհում: Հայտնաբերված հուշարձանները ցույց են տալիս մեր ժողովրդի և նրա նախորդների մշակույթը, պատմությունը, լուսարանում հեռավոր անցյալը:

Մեր պատմության ուսումնասիրության համար մեծազույն նշանակություն ունեցավ Մաշտոցի անվան պետական մատենադարանի ստեղծումը, որտեղ հավաքվեցին հազարավոր հայկական ձեռագրեր և դարձան սիստեմատիկ ուսումնասիրության առարկա, համամարդկային գիտության սեփականությունը:

Երբ խոսում ենք հայագիտության մասին, մենք հասկանում ենք ոչ միայն հայոց պատմությունը, այլև հայոց մշակույթը, նրա դրականությունը: Այստեղ ստեղծվել են մի շարք մենագրություններ և դասագրքեր, մեծ աշխատանք է կատարվել հայ կլասիկների երկերի հրատարակության գծով: Ես մանրակրկիտ և մեծ աշխատանք պահանջող գործ է Մոտ ժամանակներս լույս կտեսնեն Զարենցի երկերի հերթական հատորները: Երասական գրականությունը մեր ազգային հարստությունն է և ամեն ինչ պետք է արվի, որպեսզի մեր կլասիկների երկերը հրատարակվեն լավագույն ձևով, գիտական հիմքերի վրա:

Մեծ նշանակություն ունեն լեզվի խնդիրները, որոնցով զբաղվում է լեզվի ինստիտուտը: Պետք է պահանջել միայն, որ մեր լեզվաբանները, որոնք աշխատում են հին մեթոդներով, ավելի մոտենան այն նոր մեթոդներին, որոնք բացվում են շնորհիվ մաթեմատիկայի կիրառման, շնորհիվ բանական մեթոդների առաջացման: Մենք ունենք Հրաչյա Աճառյանի սրատրաստած շատ հե-

տարրերի բառարանները: Պատրաստ է հրատարակության հայերենի բացատրական նոր բառարանը:

Մեծ աշխատանք է տարվում նաև արվեստի պատմության գծով: Այստեղ փաստորեն ամեն ինչ սկսվել է դատարկ տեղում, որովհետև սխտեմատիկ գիտական աշխատանք արվեստի պատմության բնագավառում չի կատարվել: Նույնը պիտի ասել նաև փիլիսոփայության մասին:

Մենք կատարում ենք նաև որոշ աշխատանք արևելագիտության բնագավառում: Անհրաժեշտ է լայնացնել այդ աշխատանքը: Իհարկե, մեր սրբազան պարտականությունն է, զբաղվել մեր սեփական պատմության և մշակույթի հարցերով, բայց մենք չենք կարող սահմանափակվել միայն դրանով: Եթե մենք ուզում ենք ավելի զարգացնել մեր մշակույթը, պետք է համեմատականորեն ուսումնասիրենք նաև մյուս ժողովուրդների պատմությունը և մշակույթը:

Մեր հաջողությունների կարևորագույն նախապայման եղել է այն մեծ աշակցությունը, որ միշտ ցույց է տրվել մեզ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայաստանի կառավարության կողմից: Պետք է նշել նաև, որ մենք միշտ եղել ենք սերտ կապերի մեջ մեր եղբայրական ժողովուրդների գիտնականների, մասնավորապես, ռուս գիտնականների հետ:

Բայց կան և ուրիշ պահանջներ, որոնք այսօր կարևոր են դարձել և որոնց բավարարումը արդեն մեզանից է կախված: Մենք պետք է մեր երիտասարդ սերնդի մեջ դաստիարակենք լազիատասիրություն: Նրանք չպետք է կորցնենք մեր համեստությունը: Ես, իհարկե, համաձայն եմ, որ մեր ժողովուրդը տաղանդավոր ժողովուրդ է, բնդունակություններով օժտված մարդիկ շատ ունի: Սակայն մենք չպետք է գերազնահատենք մեր ունեցած հաջողությունները: Գիտությունը անհամատեղելի է անհամեստության հետ: Հաջողությունների հետ միասին, մենք պետք է ասենք նաև մեր թերությունների ու անհաջողությունների մասին: Ծիշտ է, մենք շատ առաջ ենք գնացել գիտության մեջ. մեր գիտական հիմնարկները հարստացել են նոր տեսակի ապարատորայով: Սակայն այդ ապարատորայի ստեղծումը միայն զննման միջոցով չպետք է կատարվի: Գիտության մեջ ավելի մեծ քայլերով առաջ գնալու համար մենք ինքներս պետք է ձգտենք առաջիկա տարիներին մեր գիտական հիմնարկներում ստեղծել գիտական նոր սպարատորա: Այն պետք է խելացի կիրառվի, աշխատի անխափան և տա ցանկալի արդյունքներ:

Ավարտվեց կես դար, 50 տարի: Մեր առաջ բացվում են նոր հեռանկարներ: Կասկած չկա, որ հետագա 50 տարում նույնպես կկարողանանք պատվով կատարել մեր ժողովրդի առաջադրանքները, Հայաստանը դարձնել բարձր գիտության երկիր: Շնորհիվ բարենպաստ պայմանների մեր հանրապետությունը ունեցավ հերթափոխ, աներևակայելի զարգացում:

Մենք ցանկանում ենք խաղաղություն, որ կարողանանք այսուհետև էլ խաղաղ աշխատել և զարգացնել սովետական գիտությունը, եղբայրական ժողովուրդների, այդ թվում և Սովետական Հայաստանի գիտությունը: Մեր կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը ոչինչ չեն խնայում և ամեն բան անում են գիտության զարգացման համար:

Ցանկանք, որ մեր ժողովուրդը հավերժ ապրի կոմունիստական առաջնակարգ հասարակարգի պայմաններում, խաղաղության պայմաններում: